

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

« ԱՆՏՈՆ »

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՍԱՐԻ ԳՐԱՆՈԴԻՈՐԻՏՆԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ
ՀԱՐԱՎ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ՏԵՂԱՄԱՍՈՒՄ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ
ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

Տնօրեն՝

Ա. ՍԱՔԱՆՅԱՆ

Երևան 2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ	3
1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	5
Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը	5
Նախատեսվող գործունեության բնութագիրը	9
Նախագծման նորմատիվ-իրավական հենքը	11
2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ	15
Գտնվելու վայրը	15
Ռելիեֆ, երկրաձևաբանություն, սեյսմիկ պայմաններ, սողանքային երևույթներ	18
Կլիման	22
Մթնոլորտային օդ	26
Ջրային ռեսուրսներ	26
Հողեր	29
Բուսական և կենդանական աշխարհ	31
Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ	34
3. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ	36
Ենթակառուցվածքներ	36
Հողերի տնտեսական յուրացման բնութագիր	40
Պատմության, մշակութային հուշարձաններ	41
4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	43
5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	48
6. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ (ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ) ՊԼԱՆ	54
Օգտագործված գրականության ցանկ	56

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Երկրաբանական ուսումնասիրություններ՝ ընդերքի երկրաբանական աշխատանքների համալիր, որի նպատակն է ուսումնասիրել երկրակեղևի կառուցվածքը, ապարների առաջացման պայմանները, արտածին երկրաբանական պրոցեսները, հրաբխային գործունեությունը, ինչպես նաև հայտնաբերել ու գնահատել կամ վերագնահատել օգտակար հանածոների պաշարները.

Ընդերքօգտագործման իրավունք՝ համապատասխան ընդերքօգտագործման համաձայնությունով կամ թույլտվությունով, ծրագրով կամ նախագծով, ընդերքօգտագործման պայմանագրով, լեռնահատկացման ակտով հավաստվող՝ ընդերքի որոշակի տեղամասի երկրաբանական ուսումնասիրության կամ օգտակար հանածոների արդյունահանման բացառիկ իրավունքներ.

Գետառողղատային տիպի հանքավայր՝ գետերի ողողատային տարածք, որը պարունակում է գետի վարարումների հետևանքով կուտակված ավազի (ավազակոպճային, ավազակոպճազլաքարային խառնուրդի) վերականգնվող պաշարներ, որոնք ստացել են երկրաբանատնտեսագիտական գնահատական.

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատական՝ երկրաբանական ուսումնասիրությունների և օգտակար հանածոների արդյունահանման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունների բացահայտում և գնահատում

Բնապահպանական կառավարման պլան՝ ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ և դրանց իրականացման մշտադիտարկման ցուցիչներ, որոնք հստակ են և չափելի՝ որոշակի ժամանակի ընթացքում

Բույսերի Կարմիր գիրք՝ միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող բույսերի և համակեցությունների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների, ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին

Կենդանիների Կարմիր գիրք՝ միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ է, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող կենդանիների կարգավիճակի, աշխարհագրական

տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին

Հող` երկրի մակերևույթում բիոտիկ, աբիոտիկ և մարդածին գործոնների երկարատև ազդեցության արդյունքում առաջացած ինքնուրույն բնագիտապատմական հանքաօրգանական բնական մարմին` կազմված կոշտ հանքային և օրգանական մասնիկներից, ջրից ու օդից և ունի բույսերի աճի ու զարգացման համար համապատասխան պայմաններ ստեղծող յուրահատուկ գենետիկամորֆոլոգիական հատկանիշներ ու հատկություններ

Հողի բերրի շերտ` հողային ծածկույթի վերին շերտի բուսահող, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով

Խախտված հողեր` առաջնային տնտեսական արժեքը կորցրած և շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության աղբյուր հանդիսացող հողեր

Ռեկուլտիվացում` խախտված հողերի վերականգնմանն ուղղված (օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների համալիր, որը կատարվում է 2 փուլով` տեխնիկական և կենսաբանական

Ազդակիր համայնք` շրջակա միջավայրի վրա հիմնադրությային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի (համայնքների) բնակչություն` ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք

Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով մշտադիտարկումներ` ընդերքի երկրաբանական ուսումնասիրության և օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքային ծրագրերին զուգընթաց` երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ծրագրով, օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքային նախագծով, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտով և ազդեցության գնահատման հաշվետվությամբ ամրագրված ցուցանիշների հիման վրա իրականացվող մշտադիտարկումներ

Արտադրական լցակույտեր` օգտակար հանածոների ուսումնասիրության, արդյունահանման կամ վերամշակման արդյունքում առաջացած ընդերքօգտագործման թափոններ (այդ թվում` պոչանքներ)` տեղադրված երկրի մակերևույթի վրա կամ լեռնային փորվածքներում:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

▪ *Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը*

ՀՀ Լոռու մարզի Մեծ Սարի գրանողիորիտների Հարավ-արևելյան տեղամասում նախատեսվում է իրականացնել օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներ:

Տեղամասը տեղակայված է Մեղրուտ գյուղից մոտ 4.5կմ արևելք, Փամբակ գետի անանուն վտակի վերին հոսանքի ավազանում:

Տեղամասի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են այլուվիալ-դելյուվիալ առաջացումները և վերին էոցեն-ստորին օլիգոցենի հրաբխածնանստվածքային առաջացումները, որոնք ներկայացված են գրանողիորիտներով: Այս ապարները հզոր ելքերով մերկացած են Մեղրուտ գյուղի հյուսիսային և արևելյան ծայրամասերում:

Շրջանում միջին էոցենի հասակի առաջացումների ընդհանուր հզորությունը մետասոմատիկ վերամշակված տարատեսակների հետ միասին կազմում է մոտ 600 մետր և ավելի: Այս ապարները ամենուր անկում են դեպի հարավ-արևմուտք 220- 240° ազիմուտով 30-35° անկյան տակ:

Գրանողիորիտները հանդիսանում են հիմքային-միջին կազմի մագմայի ներժայթքային ներդրման արդյունք: Դրանք հիմնականում հոծ, ծանր, զանգվածեղ, ման-րա-հատիկ և միջնահատիկ կազմվածքով, մոխրագույն, մուգ մոխրագույն և սևավուն ապարներ են:

Հետախուզման սահմաններում օգտակար հաստվածքը ներկայացված է մոխրագույն, մուգ մոխրագույն ճեղքավորված, հոծ, մանրա-միջնահատիկ գրանողիորիտներով:

Օգտակար հաստվածքի մերձ-մակերևութային մասերը ներկայացված են խիստ ճեղքավորված, հողմահարված, փոփոխված գրանողիորիտներով: Ըստ խորության ճեղքավորվածության աստիճանը նվազում է:

Հողմահարված գրանողիորիտների հզորությունը տատանվում է 4.1-ից 7.3մ-ի սահմաններում, կազմելով միջինը 5.51 մ:

Մանրադիտակի տակ ըստ միներալային կազմի հանքավայրի գրանողիորիտները բավականին միատարր են, կազմվածքը հիմնականում

պորֆիրային է: Ապարը կազմված է պլագիոկլազի, դաշտային սփաթի, քվարցի և ամֆիբոլի հատիկներից: Պլագիոկլազը հանդիպում է 0.5-ից 2.4մմերկարությամբ իդիոմորֆ հատիկների տեսքով: Դաշտային սփաթը ներկայացված է 0.3-ից 2.0մմ երկարությամբ իդիոմորֆիզմով թույլ արտահայտված և պելիտիզացված հատիկներով: Քվարցը հանդիպում է 0.7-ից 0.9մմ երկարությամբ անկանոն ձևի հատիկներով: Երկրորդային միներալները ներկայացված են էպիդոտով, սերիցիտով, քլորիտով:

Ժամանակակից առաջացումները ներկայացված են փուխր-բեկորային դելյուվիալ նստվածքներով: Այս առաջացումները կազմված են վերը նկարագրված ապարների տձև, չիղկված բեկորներ պարունակող, ավազակավային նյութով թույլ ցմենտացված նստվածքներով: Տեղամասի սահմաններում դելյուվիալ նստվածքների հզորությունը տատանվում է 1.1-ից 1.8 մ-ի սահմաններում, կազմելով միջինը՝ 1.41 մ:

Գրանոդիորիտների ճեղքավորվածության աստիճանը և ֆիզիկամեխանիկական հատկությունները բավականին կայուն են, քիմիական և պետրոգրաֆիական կազմերը՝ համանման:

Գրանոդիորիտների մերձակերեսային, հողմահարված մասում ճեղքերի հեռավորությունը 15-30 սմ է, իսկ լայնությունը մի քանի մմ-ից մինչև 3-5 սմ է: Միջճեղքային տարածությունները լցված են հողմահարման արդյունքում առաջացած խճավազային նյութով: Ճեղքերն ունեն տարաբնույթ ուղղվածություն և ենթակա չեն համակարգման: Դրանցում ճեղքերի տարրերի չափումներ չեն կատարվել:

Հանքավայրն ըստ երկրաբանական կառուցվածքի բարդության և երկրաբանական հայտանիշների փոփոխականության աստիճանի վերագրվում է 1-ին խմբին:

Հանքավայրի օգտակար հանածոն բնութագրվում է հետևյալ քիմիական կազմով և ֆիզիկամեխանիկական ցուցանիշներով (աղյուսակներ 1-2).

Աղյուսակ 1.

Նմուշի համարը	Պ ա ր ու ն ա կ ու թ յ ու ն ն ե ր ը , % %								
	SiO ₂	Fe ₂ O ₃	TiO ₂	Al ₂ O ₃	CaO	MgO	Na ₂ O	K ₂ O	ԿՇՊ
1	2	3	4	5	6	7	8	9	10
2	50.50	8.36	0.45	16.25	12.56	4.84	2.54	1.24	2.21
11	51.11	7.39	0.33	16.11	13.11	4.77	2.61	1.32	2.16
Միջինը	50.81	7.87	0.39	16.18	12.84	4.81	2.58	1.28	2.19

Աղյուսակ 2.

Հ/Հ	Ցուցանիշները	Չափման միավորը	Ցուցանիշների մեծությունները		
			նվազագույնը	առավելագույնը	միջինը
1	2	3	4	5	6
1.	Իրական խտությունը	գ/սմ ³	2.89	2.93	2.91
2.	Միջին խտությունը	կգ/մ ³	2837	2880	2854
3.	Ծակոտկենությունը	%	1.05	2.83	1.93
4.	Ջրակլանումը	%	0.15	0.17	0.16
5.	Ամրության սահմանը սեղմման ժամանակ				
	- չոր վիճակում	կգ/սմ ²	1010	1194	1076
	- ջրահագեցված վիճակում	“---”	825	1010	899
	- 25 փուլ սառոցումից-հալեցումից հետո	“---”	678	852	753
6.	Փափկեցման գործակիցը		0.80	0.86	0.84
7.	Սառնակայունության գործակիցը		0.82	0.85	0.84
8.	Աղակայունությունը`	%	0.68	0.88	0.78

Բլոկների արդյունահանման արդյունքում առաջացած թափոնները գնահատվել են որպես հումք շինարարական խճի և ավազի արտադրության համար: Աղյուսակներ 3 և 4-ում բերվում են ստացված խճի և ավազի ֆիզիկամեխանիկական փորձարկումների տվյալները:

Աղյուսակ 3.

ԽՃի ֆիզիկամեխանիկական փորձարկումների տվյալները

Ցուցանիշները	Ցուցանիշների մեծությունները
1	2
Լցման խտությունը, կգ/մ ³	1550
Ջրակլանումը, %	0.18
Փոշենման և կավային մասնիկների պարունակությունը, %	0.30
Թերթային և ասեղնաձև հատիկների պարունակությունը, %	21.2
Խումբը ըստ հատիկների ձևի	2
Ջարդելիություն	
- զանգվածի կորուստը, %	
10-20մմ	12.80
20-40մմ	13.10
- մակնիշն ըստ ջարդելիության (ամրության մակնիշը)	1200
Զանգվածի կորուստը ծծմբական նատրիումի լուծույթում (5 ցիկլ), %	1.6
Մաշելիություն	
- զանգվածի կորուստը, %	
5-10մմ	25.50
- մակնիշն ըստ մաշելիության, %	II-2
Հիմքերում լուծվող սիլիցիումի ամորֆ տարատեսակը, մմոլ/լ	25.6

Աղյուսակ 4.

Ավազի ֆիզիկամեխանիկական փորձարկումների տվյալները

Ցուցանիշները	Ցուցանիշների մեծությունները
1	2
Լցման խտությունը, կգ/մ ³	1710
Փոշենման և կավային մասնիկների պարունակությունը, %	0.37
Խոշորության մոդուլը	2. 9
Օրգանական խառնուկները	բացակայում են
Ընդհանուր ծծումբը վերահաշվարկված SO ₃ -ի (%)	<0.5

2020թ. հունիսի 1-ի դրությամբ տեղամասում հաշվարկվել են 1894.4հազ.մ³ գրանոդիորիտների պաշարներ, այդ թվում 1-Յ բլոկում 1056.3 հազ.մ³ և 2- Շ₁ բլոկում 838.1 հազ. մ³:

Գրանոդիորիտներն իրենց ֆիզիկամեխանիկական ցուցանիշներով լիովին համապատասխանում են «Блоки из горных пород для производства облицовочных, архитектурно – строительных, мемориальных и других изделий» 9479-2011 ԳՕՍՏ-ի տեխնիկական պահանջներին ու պիտանի են բլոկների արդյունահանման համար:

Գրանոդիորիտներից ստացված խիճն իր ֆիզիկամեխանիկական ցուցանիշներով համապատասխանում է «Խիճ և կոպիճ խիտ լեռնային ապարներից շինարարական աշխատանքների համար» 8267-95 ՀՍ ՄՕՏ-ի պահանջներին և կարող է օգտագործվել որպես լցանյութ ծանր բետոնների արտադրության համար, ճանապարհաշինարարության մեջ և այլ տեսակի շինարարական աշխատանքներում:

▪ **Նախատեսվող գործունեության բնութագիրը**

«Անտոն» ՍՊ ընկերությունը Մեծ Սարի գրանոդիորիտների հանքավայրի Հարավ-արևելյան տեղամասի շահագործումը նախատեսում է իրականացնել բաց եղանակով:

Օգտակար հանածոյի արդյունահանումը նախատեսվում է կատարել առանց պայթեցման աշխատանքների՝ հորատասեպային եղանակով, 5.մ բարձրությամբ աստիճաններով: Վերջնական եզրագծում աստիճանները մարվում են 10.մ բարձրությամբ, որոնց միջև թողնվում է 4մ լայնությամբ բերմա: Նշված պայմաններով կառուցված բացահանքն ունի հետևյալ պարամետրերը՝

- առավելագույն երկարությունը – մոտ 230մ;
- առավելագույն լայնությունը – մոտ 260մ;
- առավելագույն մշակման խորությունը – մոտ 90մ;
- օտարման մակերեսը – շուրջ 5.2հա:

Բացահանքի շահագործման ժամկետը ընդունված է 20 տարի:

Բացահանքի տարեկան արտադրողականությունը կկազմի (նախնական ցուցանիշներով).

- ըստ բլոկների՝ 2000 մ³,
- ըստ օգտակար հանածոյի զանգվածի՝ 6431 մ³,
- ըստ մակաբացման ապարների՝ 1286 մ³:

Բացահանքում արդյունահանման աշխատանքները նախատեսվում է կատարել շուրջտարի, աշխատանքների օրերի թիվը տարում ընդունված է 220 օր, հերթափոխների թիվը օրում -1, հերթափոխի տևողությունը - 8. Ժամ:

Օգտակար հաստաշերտի մշակման ժամանակ ընդունվում է ընդերկայնական, միակողմանի, խորացող մշակման համակարգ, մակաբացման ապարները արտաքին ժամանակավոր լցակույտ տեղափոխմամբ:

Ընդունված մշակման համակարգի տարրերն են՝

- աշխատանքային աստիճանի բարձրությունը – 5մ (2 հատ 2.5մ բարձրությամբ ենթաստիճաններով), մարվում են 10մ բարձրությամբ,
- աշխատանքային աստիճանի թեքությունը – մոտ 90°,
- մարված մակաբացման աստիճանի թեքությունը – մոտ 60°,
- աշխատանքային հրապարակի ամենափոքր լայնությունը – 20մ,
- մարված 2 աստիճանների մեջ թողնվում է 4մ լայնությամբ բերմա:

Բացահանքի տարածքում մակաբացման ապարների ծավալը կազմում է մոտ 353.5.հազ.մ³, որից բուսահողը՝ շուրջ 17.8հազ.մ³: Դրանց հեռացումը դեպի արտաքին լցակույտ կկատարվի բուլդոզեր-էքսկավատոր-ավտոինքնաթափ լեռնահանքային համալիրով: Լցակույտը նախատեսվում է տեղադրել բացահանքից ոչ հեռու նրա շրջակայքում:

Հողի բերրի շերտը հեռացվելու և կուտակվելու է մակաբացման ապարներից առանձին:

Բերրի շերտի լցակույտը կկազմակերպվի բացահանքի հարակից հատվածում:

Մակաբացման ապարները բացահանքի շահագործման ավարտից հետո նախատեսվում է տեղափոխել մշակված տարածք՝ փոել և հարթեցնել, իրականացնելով լեռնատեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացիա:

Բացահանքի պաշարների սպառումից հետո նախատեսվում է կատարել խախտված տարածքների՝ բացահանքի, արտադրական հրապարակի, լցակույտի, մոտեցնող ճանապարհի ռեկուլտիվացիա:

Բացահանքի տեխնիկական ցուցանիշները կճշտվեն հանքավայրի շահագործման աշխատանքային նախագծի մշակման փուլում:

▪ **Նախագծման նորմատիվ-իրավական հենքը**

Արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են հետևյալ իրավական ակտերում.

- ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք (ՀՕ-280, 28.11.2011թ.), որով սահմանվում են ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, կարգավորվում են ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանության, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերքօգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները:
- ՀՀ Հողային օրենսգիրք (ՀՕ-185, 02.05.2001թ.), որը սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:
- ՀՀ Ջրային օրենսգիրք (ՀՕ-373, 04.06.2002թ.), որով կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:
- ՀՀ Անտառային օրենսգիրք (ՀՕ-211, 24.10.2005թ.), որը կարգավորում է ՀՀ անտառների և անտառային հողերի կայուն կառավարման՝ պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև անտառների հաշվառման, մոնիթորինգի, վերահսկողության և անտառային հողերի հետ կապված հարաբերությունները:

- «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.), որը սահմանում է պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում:
- «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.), որը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը:
- «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-121, 11.10.1994թ.), որի առարկան մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունների կարգավորումն է:
- «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:
- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-110, 21.06.2014թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները:
- «Թափոնների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-159, 24.11.2004թ.), որով կարգավորվում են կարգավորում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ

հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը:

- ՀՀ բնապահպանության նախարարի 24.12.2012թ.-ի թիվ 365-Ն հրաման, որով կարգավորվում են շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին ընդերքօգտագործողների կողմից նախատեսված ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկման և ինդեքսավորման կարգի հետ կապված իրավահարաբերությունները:
- ՀՀ կառավարության 10.01.2013թ.-ի թիվ 22-Ն որոշում, որով սահմանվել են օգտակար հանածոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման, դրանց իրականացման վճարների չափերի հաշվարկման և վճարման կարգերը:
- ՀՀ կառավարության 14.12.2017թ.-ի թիվ 1643-Ն որոշում, որը կիրառվում է Հայաստանի Հանրապետության տարածքում խախտված հողերի հաշվառման, հողաշինարարական, քարտեզագրման, կանխատեսվող ու իրականացման ենթակա ռեկուլտիվացման աշխատանքների նախագծման, ռեկուլտիվացման, ռեկուլտիվացված հողերի նպատակային նշանակության ուղղությունների որոշման, ինչպես նաև նպատակային ու գործառական նշանակությանը համապատասխան՝ դրանց հետագա օգտագործման ժամանակ:
- ՀՀ կառավարության 08.09.2011թ.-ի N1396-Ն որոշում, որով սահմանվում են ՀՀ տարածքում հողի բերրի շերտի (այսուհետ՝ բերրի շերտ) նպատակային և արդյունավետ օգտագործման հետ կապված հարաբերությունները:
- ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի N781-Ն որոշում, որը սահմանում է սահմանում է Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման ընթացակարգը:
- ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշում, որը սահմանում է ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների

նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը:

- ՀՀ կառավարության 02.11.2017թ.-ի N1404-Ն որոշում, որով սահմանվել են հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և պակաս արդյունավետ հողերի բարելավման համար հողի բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները:
- ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը,
- ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բույսերի Կարմիր գիրքը,
- ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N967-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բնության հուշարձանների ցանկը:
- ՀՀ կառավարության 15.06.2017թ.-ի N676-Ն որոշում, որով հաստատվել են ընդերքօգտագործման թափոնների կառավարման և վերամշակման պլանների օրինակելի ձևերը:
- ՀՀ կառավարության 23.08.2012թ.-ի N1079-Ն որոշում, որով կարգավորվում են Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի 69-րդ հոդվածով սահմանված՝ շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի (այսուհետ՝ դրամագլուխ) օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման հետ կապված հարաբերությունները:
- ՀՀ բնապահպանության նախարարի 05.08.2014թ.-ի N218-Ն հրաման, որով հաստատվել են ՀՀ Լոռու մարզի բնության հուշարձանների անձնագրերը:

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

▪ **Գտնվելու վայրը**

Մեծ Սարի գրանողիորիտների հանքավայրի Հարավ-արևելյան տեղամասը վարչական առումով գտնվում է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզում, Գուգարք (նախկինում՝ Մեղրուտ) գյուղից մոտ 4.5կմ արևելք, Փամբակ գյուղից 4.2կմ հարավ-արևելք (նկար 1, 2.1, 2.2): Վարչական առումով տեղամասը ներառված է Գուգարք համայնքում:

Տեղամասի ամենամոտ բնակավայրերից են նաև Վանաձոր քաղաքը, Խնձորուտ և Տանձուտ գյուղերը, որոնց հետ տեղամասը կապված է բարենպաստ գրունտային և ասֆալտապատ ճանապարհներով:


Տեղամասի կենտրոնի աշխարհագրական կոորդինատներն են.

- հյուսիսային լայնության – 40° 48´ 10”
- արևելյան երկայնության - 44° 36´ 38”:

Տեղամասը գտնվում է 2270-ից 2360մ բացարձակ բարձրությունների վրա և զբաղեցնում է մոտ 5.1հա մակերես:


Տեղամասի ARM WGS-84 համակարգով ամրագրված ծայրակետային կոորդինատներն են.

1. 4518831, 8466830	13. 4518839, 8467091	25. 4518737, 8466886
2. 4519010, 8466922	14. 4518823, 8467095	26. 4518753, 8466883
3. 4519000, 8466927	15. 4518642, 8466999	27. 4518767, 8466882
4. 4518992, 8466933	16. 4518647, 8466981	28. 4518802, 8466885
5. 4518962, 8466960	17. 4518652, 8466970	29. 4518803, 8466884
6. 4518941, 8466978	18. 4518657, 8466959	30. 4518805, 8466883
7. 4518913, 8467000	19. 4518678, 8466928	31. 4518808, 8466880
8. 4518898, 8467018	20. 4518696, 8466905	32. 4518811, 8466875
9. 4518887, 8467035	21. 4518698, 8466902	33. 4518814, 8466869
10. 4518873, 8467060	22. 4518703, 8466898	34. 4518823, 8466846
11. 4518863, 8467074	23. 4518707, 8466895	35. 4518828, 8466835
12. 4518853, 8467083	24. 4518714, 8466892	36. 4518831, 8466830




Նկար 1.

Մեծ Սարի գրանդիտիտների հանքավայրի
Հարավ-արևելյան տեղամասի
իրարարային սխեմատիկ քարտեզ



Արտատված է K-38-114-B
տպագրաֆիական բարտեզից

Նկար 2.1.



Նկար 2.2.

(հեռավորությունը մինչև Գուգարք գյուղ՝ 4.5կմ, մինչև Փամբակ գյուղ՝ 4.2կմ, մինչև Մ-8 միջպեական ավտոճանապարհը՝ 3.4կմ, մինչև Մ-6 ավտոճանապարհը՝ 4.2կմ, մինչև Թամբակ գետի վտակը՝ 0.2կմ):

- **Ռելիեֆ, երկրաձևաբանություն**

Լեռնագրական տեսակետից երևակման տարածաշրջանը հարում Բագումի և Փամբակի լեռնաշղթաներին:

Բագումի լեռնաշղթան պատկանում է Փոքր Կովկասի Վիրահայոց-Ղարաբաղի լեռնահամակարգի (միաթեք աստիճանաձև բեկորային զոնա) ներքին լեռնաշղթաների թվին և 66կմ երկարությամբ ձգվում է Սեպասարի սարավանդից մինչև Փամբակ գետի Գայլաձոր կիրճը: Լեռնաշղթան ունի 2800մ միջին, 2992մ (Ուրասար) առավելագույն բարձրություն:

Բագումի հորստ-կամարածալքը համապատասխանում է երկրաբանական կառուցվածքին, դրան բնորոշ են համաչափ ուռուցիկ աստիճանաձև լանջեր: Տարածքի կառուցվածքային ռելիեֆին բնորոշ են երկրորդական կարգի կամարածալքային (Ուրասարի, Չքնաղի), գմբեթաձև (Մայմեխի), զոգածալքային կամ ճկվածքային (Գարգառի), գրաբեն-զոգածալքայ Սկսվում է Ջաջուռի լեռնանցքից (1952 մ) և ձգվում դեպի հարավ արևելք՝ մինչև Սևանի լեռնանցք (2114 մ): ՀՀ-ի խոշոր լեռնաշղթաներից է, ունի մոտ 106 կմ ձգվածություն: Ամենաբարձր

մասը կենտրոնական հատվածում Թեժ լեռն է՝ 3101 մ բարձրությամբ, մյուս գագաթները հայտնի են Ամպասարը (3053 մ), Խաղխաղ լեռը (3044 մ), Գոմասարը (2885 մ), Պահակասարը (2891 մ), Կամար լեռը (2738 մ), Ծիլքարը (2558 մ), Հարսնաքարը (2483 մ) և այլն: Լեռնաշղթայի գլխավոր ճյուղավորումներից են Ծաղկունյաց և Արջանոցի լեռները:

Փամբակի լեռնաշղթան ունի անհամաչափ կառուցվածք: Խիստ զառիվեր լանջերով ցածրանում է դեպի հյուսիս, տեղ-տեղ առաջացնելով 5-6 կմ երկարությամբ փոքր լեռնաբազուկներ, իսկ ավելի թույլ թեքությամբ՝ իջնում է դեպի հարավ, որտեղ առանձին լեռնաբազուկների ձգվածությունը հասնում է մինչև 12 կմ-ի:


Լեռնաշղթայի տարբեր կողմանադրության լանջեր տարբերվում են միմյանցից: Դեպի Փամբակի հովիտ իջնող լանջերի կենտրոնական և արևելյան հատվածները ամբողջովին անտառապատ են, իսկ արևմտյան մասում՝ հատկապես Սպիտակի գոգավորություն իջնող լանջերը պատված են լեռնասևահողային տափաստաններով, այդ պատճառով հյուսիսահայաց լանջերը քիչ են մասնատված: Հարավահայաց լանջերը պատված են տափաստանային բուսականությամբ: Սրա արևմտյան հատվածում լանջերն իջնում են մեծ թեքությամբ և թաղվում Գեղանիստի լավաների տակ: Լավաների վրա ձևավորվել են լեռնային սևահողեր: Կենտրոնական մասում հիմնականում չոր տափաստաններ են, հետևաբար տեղանքը խիստ մասնատված է:

Շրջանի լեռների մակերևույթի թեքության անկյունների և երկրաձևաբանական սխեմատիկ քարտեզները բերվում են ստորև նկար 3-4-ում:

Հարավ-արեյան տեղամասի տարածքում գեոդինամիկ երևույթներ՝ սողանքներ, քարաթափեր չեն արձանագրվել: Սողանքների վերաբերյալ տեղեկատվության հիմք է հանդիսանում Հայաստանում սողանքների տեխնիկական տեղեկագիրը (Միջազգային համագործակցության ճապոնական գործակալություն, ՀՀ քաղաքաշինության նախարարություն, 2005):

Շրջանում հայտնի սողանքային մարմինների տեղադիրքերը արտացոլված են նկար 5-ում: Աղյուսակ 5-ում ներկայացված են տվյալներ տեղամասին ամենամոտ գտնվող սողանքային մարմինների վերաբերյալ:

ՀԱՆՁՆԵՐԻ ԹԵՔՆԻԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՆԵՄԱՏԻԿ ՔԱՐՏԵԶ




ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- 1 - Կտրուկ լանջեր (30-35°)
- 2 - Մեղմ կտրուկ լանջեր (24-29°)
- 3 - Թեք լանջեր (20-23°)
- 4 - Մեղմաթեք հարթավայրեր (5-9°)

Նկար 3.

ՄԻՆԵՄԱՏԻԿ ԵՐԿՐԱԶԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՔԱՐՏԵԶ




ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- 1 - Միջին բարձրության ծալքաբեկորային լեռնաշղթաներ (1500-2500մ) ուղիղ լանջերով և պլիբաձև զագաթների խորը կտրտված V-նման հովիտներով և ձորակներով
- 2 - Ներլեռնային նեղ միջին բարձրության թեքվածքներով գոգահովիտներ

Նկար 4.

ՍՈՂԱՆՔԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՄԱՆ
ՄԽԵՄԱՏԻԿ ՔԱՐՏԵԶ




Նկար 5.

Աղյուսակ 5.

Սողանքային մարմնի ծածկագիրը	Սողանքային մարմնի կոորդինատները և բարձրությունը						Չափերը			
	Latitude N			Longitude E			Բարձրությունը (մ)	լայն. (մ)	երկար. (մ)	մակերես (հա)
	Աստ.	Ըոպե	Վայրկ.	Աստ.	Ըոպե	Վայրկ.				
114-0270	40	46	29	44	32	51	1499	600	350	19
114-0410	40	49	47	44	34	28	1505	250	500	11
114-0740	40	48	26	44	39	4.8	2124	500	700	26

114-0270 և 114-0410 սողանքային մարմինները դասվել են վտանգավորության III-րդ դասին, ռիսկի աստիճանը՝ միջին: 114-0740 սողանքային մարմինը դասվել է վտանգավորության III-րդ դասին, ռիսկի աստիճանը՝ ցածր:

Ըստ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր» N102-Ն հրամանի՝ հայցվող տարածքը գտնվում է 3-րդ սեյսմիկ գոտում, որտեղ գրունտի հորիզոնական արագացման մեծությունը կազմում է 500 սմ/վ² կամ 0.5g (նկար 6):




Նկար 6.

▪ **Շրջանի կլիման**

Մեծ Սարի գրանտոդիորիտների հանքավայրի Հարավ-արևելյան տեղամասի շրջանի կլիման լեռնային է, չափավոր տաք, խոնավ, տեղումներով համեմատաբար հարուստ, որոնք տարեկան կազմում են միջինը 700-750 մմ: Ամառը երկար է և տեղումներով հարուստ: Ձմեռը սևում է մոտ 4 ամիս, բնութագրվում է ձնառատությամբ: Ձյան ծածկոցի հաստությունը հաճախ հասնում է 50սմ-ի:

Օդի տարեկան միջին ջերմաստիճանը կազմում է +7-ից +10°C, ձմռան ամիսներին իջնելով մինչև -20-25°C, իսկ ամռանը բարձրանում է մինչև +30°C (հիմնականում օգոստոս ամսին): Լեռնագագաթներին և ջրբաժանների վրա ձյան ծածկույթը պահպանվում է մինչև մայիս-հունիս ամիսները:

Նկար 7-ում բերված է կլիմայական գոտիների տարածման սխեմատիկ քարտեզը:



Նկար 7.

Ստորև 6-11-րդ աղյուսակներում ամփոփված է տեղեկատվություն օդի ջերմաստիճանի, մթնոլորտային տեղումների և ձնածածկի վերաբերյալ (ըստ մոտակա Լերմոնտովո օդերևութաբանական կայանի տվյալների):

Աղյուսակ 6.

Օդի ամսեկան և տարեկան ջերմաստիճանները

Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Միջին տարեկան, °C
-5.9	-4.4	-1.6	5.0	9.1	12.4	13.8	14.6	11.6	7.0	1.6	-2.4	5.3

Օդի հարաբերական և բացարձակ խոնավությունը

Ըստ ամիսների												Միջին տարեկան
Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
Բացարձակ խոնավությունը												
3.0	3.2	3.9	5.9	8.6	11.2	13.6	13.0	10.6	7.1	5.0	3.5	7.4
Հարաբերական խոնավությունը												
69	68	72	70	74	79	80	78	80	72	72	69	74

Աղյուսակ 8.

Մթնոլորտային տեղումները և ձնածածկը

Տեղումների քանակը, մմ միջին ամսական/առավելագույն տարեկան												Ձնածածկույթ			
Ըստ ամիսների												Տարեկան	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթի օրերի քանակը	Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ
Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր				
17	25	36	62	95	92	56	41	34	45	35	19	55	24	60	62
42	26	47	38	46	61	53	40	36	40	32	31	61			

Աղյուսակ 9.

Գոլորշիացումը

Ըստ ամիսների												Տարեկան գումարային
Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
10	11	16	29	56	63	59	55	39	29	17	11	395

Աղյուսակ 10.

Քամիներ

Ամիսներ	Կրկնելիությունը, % Միջին արագությունը, մ/վ								Անհողմությունների կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով օրերի քանակը, օր
	Ուղղությունները											
	Հս	Հս- Արլ	Արլ	Հվ- Արլ	Հվ	Հվ- Արմ	Արմ	Հս- Արմ				
հունվար	4	3	10	7	4	13	49	10	20	3.1	2.2	13
	1.5	1.7	1.5	2.0	2.2	3.8	4.0	2.4				
ապրիլ	7	7	23	12	5	9	27	10	23	2.3		
	1.5	1.9	1.6	2.2	1.3	2.7	2.3	1.2				
հուլիս	10	17	43	21	2	1	3	3	22	1.9		
	1.9	1.9	1.8	2.1	1.6	1.8	1.7	1.5				
հոկտեմբեր	6	9	28	18	4	5	20	10	37	1.6		

Աղյուսակ 11.


Անարև օրերի քանակը

Ըստ ամիսների												Տարեկան գումարային
Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
5	5	5	4	2	2	3	4	5	3	5	5	45


▪ **Մթնոլորտային օդ**

Շրջանում մթնոլորտային օդի աղտոտվածության ամենաբարձր մակարդակը Վանաձոր քաղաքում է: ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն»-ի Վանաձոր քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ:


Քաղաքում գործում է 3 անշարժ դիտակայան և 24 շարժական դիտակետ: Մարտ ամսվա փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումների տվյալները ներկայացված են 8-10 նկարների դիագրամներում:



Նկար 8.



Նկար 9.



Նկար 10.

Հարավ-արևելյան տեղամասում, դրա մոտակայքում չկան գործող արդյունաբերական կամ խոշոր գյուղատնտեսական ձեռնարկություններ: Մթնոլորտային օդի որակի մոնիթորինգ չի իրականացվում: Մոտակա Գուգարք բնակավայրի բնակչությունը չի գերազանցում 7500 մարդ:

Որոշակի պատկերացում տարածքի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ հաշվարկային եղանակով: Այդ նպատակով ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ կողմից մշակվել է ուղեցույց ձեռնարկ, ուր ներկայացված են մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշների կախվածությունը տվյալ բնակավայրի ազգաբնակչության քանակից:

Աղյուսակ 12.

Բնակչության քանակը (հազ.)	Որոշված նյութերի ֆոնային կոնցենտրացիաները (մգ/մ ³)			
	Փոշի	Ծծմբի երկօքսիդ	Ազոտի երկօքսիդ	Ածխածնի օքսիդ
50 -125	0,4	0,05	0,03	1,5
10 - 50	0,3	0,05	0,015	0,8
< 10	0,2	0,02	0,008	0,4

Արդյունահանման աշխատանքների բնապահպանական միջոցառումների կառավարման պլանը կազմելիս որպես սահմանանիշ կարող են ընդունվել նաև ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 160-Ն հրամանի հավելված 1-ով ամրագրված նորմատիվները: Ըստ նշված փաստաթղթի բնակավայրերում անօրգանական փոշու (SiO_2 պարունակությունը 70% և ավելի) առավելագույն միանվագ ՄԹԿ կազմում է 0.15մգ/մ³, միջին օրեկան ՄԹԿ՝ 0.05մգ/մ³:

▪ **Ջրային ռեսուրսներ**

Տարածքի ամենախոշոր ջրագրական միավորն է Փամբակ գետը իր Կարբի (Գարպի) վտակով է: Կարբին հոսում է Հարավ-արևելյան տեղամասի տարածքից մոտ 3.8կմ հարավ:

Փամբակ գետի ակունքը Ջաջուռի թամբոցի արևելյան լանջին գտնվող աղբյուրն է, որը գտնվում է Շիրակի և Փամբակի լեռնաշղթաների հատման մասում: Գետի ավազանը 1370 ք.կմ է: Շրջապատված է՝ հյուսիսից Բագումի, հարավից՝ Փամբակի լեռնաշղթաներով: Գետահովիտն ընդարձակ կիրճ է, որը գետաբերանի հատվածում փոխվում է խորը կանիոնի:

Կարբի (Գարպի) գետի ջրհավաք ավազանը կազմում է 102կմ²: Գետի տարեկան հոսքի բաշխումը ներկայացված է հետևյալ կերպ.

Աղյուսակ 13.

Ըստ ամիսների												Տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
0.30	0.34	1.34	2.09	4.13	3.30	2.21	0.90	1.22	0.85	0.57	0.27	1.46

Հարավ-արևելյան տեղամասի շրջանում Փամբակ գետի մոնիթորինգ իրականացվում է Վանաձորից 0.5կմ ներքև: Ըստ 2020 թվականի դիտարկումների, գետի ջուրը այդ դիտայետում 5-րդ ընդհանրական դասի է: րանցվել են ամոնիումի իոնի և ԸԱԱ գերազանցումներ (5-րդ դաս), նիտրիտ իոնի և ընդհանուր ֆոսֆորի գերազանցումներ (4-րդ դաս) և նիտրատ իոնի, ֆոսֆատ իոնի, մոլիբդենի, կալիումի և ԿՆ գերազանցումներ (3-րդ դաս):

Տեղամասի տարածքից մոտ 200մ հեռավորության վրա սկիզբ է առնում Փամբակ գետի անանուն աջակողմյան վտակներից մեկը, որը գետին է խառնվում Փամբակ գյուղից մոտ 1.5կմ վերև:

Տեղամասի երկրաբանական ուսումնասիրության ընթացքում կատարված դիտարկումներով պարզվել է ստորերկրյա ջրերի բացակայությունը բոլոր հետախուզական փորվածքներում, ինչը բացատրվում է հանքավայրը կազմող ապարների ճեղքավորվածությամբ և ջրաթափանցելիությամբ:

Հետախուզված հանքավայրի տարածքը գործնականում ջրագուրկ է, ստորերկրյա ջրերի հորիզոններ և էլքեր չեն հայտնաբերվել:

Ստորերկրյա ջրերի բացակայությունը պայմանավորված է հանքավայրի երկրաբանական և գեոմորֆոլոգիական առանձնահատկություններով: Հաշվի առնելով հանքավայրի երկրաբանական և գեոմորֆոլոգիական առանձնահատկությունները, ապարների ճեղքավորվածությունը, կարելի է փաստել, որ ապագա բացահանք ներթափանցվող ջրերը (մթնոլորտային տեղումները) կենթարկվեն բնական դրենաժի:

▪ **Հողեր**

Մեծ Սարի գրանտոդիորիտների հանքավայրի Հարավ-արևելյան տեղամասի տարածքը ներկայացված է անտառային գորշ ուժեղ չհագեցած կավայնացված հողերով (հողերի բնական տիպերի բաշխվածությունը բերված է նկար 11-ում): Հողերն իրենց ամբողջ պրոֆիլում ունեն գորշ դարչնագույն գունավորում, ծագումնաբանական հորիզոնների թույլ տարբերակում, ընկուզանման կամ ընկուզակնձկային ստրուկտուրա: Հողերում հումուսի պարունակությունը կազմում է 8.3%: Հումուսի բաղադրությունում ֆուլվոթթուները գերակշռում են հումինաթթուներին: Ռեակցիան չեզոք է կամ թույլ թթվային, կլանման տարողությունը բարձր: Հողերի համախառն քիմիական կազմը ներկայացված է աղյուսակ 14-ում:

Աղյուսակ 14.

Հողերի համախառն քիմիական կազմը

Շիկացման կորուստ	SiO ₂	Al ₂ O ₃	Fe ₂ O ₃	P ₂ O ₅	MnO	CaO	MgO	K ₂ O	SO ₃
10.01	52.1	14.8	12.3	0.14	0.28	4.02	3.1	2.75	0.50

Հողերի բնական տիպերի տարածման քարտեզ



- 1** Լեռնամարգագետնային բույլ ճմահողային խորքային - չհագեցած միջին հզորության կավավազային
- 2** Մարգագետնատափաստանային սևահողանման մանրախճաքարքարոտ փոքր հզորության կավավազային տեղ-տեղ բույլ հողմահարված
- 3** Գորշ անտառային ուժեղ չհագեցած մանրախճաքարքարոտ մեծամասամբ միջին հզորության կավավազային տեղ-տեղ բույլ և միջին հողմահարված
- 4** Գորշ անտառային ուժեղ չհագեցած կավայնացված մեծամասամբ միջին հզորության և հզոր տեղ-տեղ բույլ հողմահարված
- 5** Գորշ անտառային բույլ չհագեցած մանրախճաքարքարոտ մեծամասամբ միջին հզորության կավավազային տեղ-տեղ բույլ հողմահարված
- 6** Գորշ անտառային բույլ չհագեցած տափաստանացված փոքր հզորության կավավազային մեծամասամբ բույլ հողմահարված
- 7** Գորշ անտառային բույլ չհագեցած տափաստանացված մեծամասամբ միջին հզորության կավավազային մշակովի
- 8** Դարչնագույն անտառային լվացված մանրախճաքարքարոտ մեծամասամբ միջին հզորության կավավազային տեղ-տեղ բույլ հողմահարված
- 9** Դարչնագույն անտառային լվացված տափաստանացված մեծամասամբ միջին հզորության կավավազային բույլ հողմահարված
- 10** Դարչնագույն անտառային լվացված տափաստանացված փոքր հզորության կավավազային մեծամասամբ միջին հողմահարված
- 11** Դարչնագույն անտառային լվացված տափաստանացված մեծամասամբ միջին հզորության կավավազային մշակովի
- 12** Սևահողեր լվացված միջին հումության մեծամասամբ միջին հզորության կավավազային տեղ-տեղ բույլ հողմահարված
- 13** Սևահողեր լվացված բույլ հումության մեծամասամբ հզոր կավային մշակովի
- 14** Սևահողեր լվացված բույլ հումության փոքր հզորության կավային մշակովի
- 15** Սևահողեր տիպիկ ալրակարբոնատային միջին հումության մեծամասամբ միջին հզորության կավավազային
- 16** Սևահողեր տիպիկ ալրակարբոնատային բույլ հումության մեծամասամբ միջին հզորության կավային մշակովի
- 17** Սևահողեր սովորական ալրակարբոնատային բույլ հումության փոքր հզորության կավավազային մեծամասամբ բույլ հողմահարված
- 18** Սևահողեր սովորական ալրակարբոնատային բույլ հումության միջին հզորության մեծամասամբ կավավազային մշակովի
- 19** Սևահողեր սովորական ալրակարբոնատային բույլ հումության փոքր հզորության կավավազային տեղ-տեղ բույլ հողմահարված մշակովի
- 20** Սևահողեր սովորական գլաքարային բույլ հումության մեծամասամբ միջին հզորության կավային մշակովի
- 21** Գետահովտադարավանդային մարգագետնային փոքր հզորության կավավազային


Նկար 11.

Կլանման տարողությունը տեղամասի գորշ հողերում կազմում է 24.8մ.էկվ 100գ հողում, կլանված կատիոնների 84%-ը՝ Ca:

Հողերում ծանր մետաղների և օրգանական աղտոտիչների պարունակություններ չեն արձանագրվել:

▪ **Բուսական և կենդանական աշխարհ**


Հարավ-արևելյան տեղամասի շրջանի բուսական աշխարհը ներկայացված է անոթավոր բույսերի ավելի քան 1033 տեսակներով, որոնք պատկանում են 436 ցեղերին և 98 ընտանիքներին: Շրջանի բուսաձածկույթի համակցությունները անտառներն են ու մարգագետնա-տափաստանային տեսակները (նկար 12):



Նկար 12.

Հովտային մասերում տիրապետում է անտառային բուսաձածկը՝ հաճարենու և կաղնու խմբակցություններով, դաշտային հատվածներում՝ հացազգի-տարախոտային տափաստանային խմբակցությունները: Անտառային բույսերի՝ հաճարենու, կաղնու, հացենու, լորենու, թխկու, բոխու կողքին ժայռոտ

քարաթափերում տարածված են մասրենու, ցաքու թփուտներ: Հանդիպում են վայրի տանձենի, խնձորենի, ընկուզենի, սալորենի, հարավ-արևելքում՝ դաժու, նոսրանտառներ: Անտառածածկ տարածքների տեղադիրքը արդյունահանման նպատակով հայցվող տարածքի նկատմամբ ներկայացված է նկար 13-ում:



Նկար 13.

Լեռների բարձրադիր գոտում իրար են հերթափոխում ենթալպյան և ալպյան խմբակցությունները: Բուն երևակման տարածքը ծառապատ չէ, ներկայացված է տափաստանացված մարգագետիններին բնորոշ տարախոտային բուսականությամբ՝ *Achillea micrantha* M.B., *Bromus variegatus* M.B., *Gallium verum* L., *Phleum phleoides* (L.) Simk., *Poa bulbosa* L., *Trifolium arpestre* L.:

Տեղամասի շրջանում պահպանվող կարգավիճակ ունեցող բուսատեսակների աճելավայրերի առկայությունը պարզելու նպատակով

կատարվել է ՀՀ բույսերի Կարմիր գրքի տվյալների վերլուծություն: Տեղամասի շրջանում հայտնի են ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված հետևյալ տեսակները.

- գազ կիսալուսնաձև - կրիտիկական վիճակում գտնվող տեսակ, հայտնի է Վանաձորի շրջակայքից, տեղամասի տարածքից մոտ 6կմ հեռավորության վրա,

- սագախոտ դեղին – վտանգված տեսակ է, հայտնի է Վանաձորի շրջակայքից, տեղամասից մոտ 6կմ հեռավորության վրա,

- կոլարոլիզ եռաբաժան - կրիտիկական վիճակում գտնվող տեսակ, հայտնի է Վանաձորի շրջակայքից, տեղամասից մոտ 6կմ հեռավորության վրա,

- հովանոցասունկ կարմրող - վտանգված տեսակ, հայտնի է Վանաձորի շրջակայքից, տեղամասից մոտ 6կմ հեռավորության վրա,

- կկվածադիկ – կրիտիկական վիճակում գտնվող տեսակ է, աճում է Լեբնոնտովո գյուղի շրջակայքում, տեղամասից մոտ 4.5կմ հեռավորության վրա:

Հարավ-արևելյան տեղամասի դաշտային տեղագնման ընթացքում վերը նշված, ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակները չեն դիտարկվել:

Տեղամասի տարածքից մոտ 300-350մ հեռավորության վրա գտնվող անտառային զանգվածներում նշվել է կկու, բվիկ, փայտփոր: Դիտարկումների ժամանակ նկատվել է աղվես, նապաստակ, դաշտամուկ, սողուններից՝ սովորական լորտու, իսկ գրանոդիորիտների ժայռային ելուստների վրա՝ մողեսներ: Հայցվող տարածքը Գուգարքի բնակիչների կողմից օգտագործվում է որպես հեռագնա արոտավայր, ինչի հետ կապված տարածքում բազմաթիվ են գոմաղբ բզեզները, մրջյունները, հողային որդերը:

Դաշտային զննումների նախապատրաստական փուլում կատարվել է ՀՀ կենդանիների Կարմիր գրքի տվյալների վերլուծություն: Տեղամասի շրջանում՝ Վանաձորի շրջակայքում, տեղամասից մոտ 6կմ հեռավորության վրա, հայտնի են կարմիրգրքային երկու տեսակ.

- սանրաբեղ չրխկան - սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ,

- իշամեղու գետնային - ոչ մեծ, ընդհատվող արեալով հազվադեպ տեսակ:

Տեղամասի տարածքում դրանք չեն հանդիպել:

▪ **Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ**

Մեծ Սարի գրանտոդիրիտների հանքավայրի Հարավ-արևելյան տեղամասի շրջանը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքի սահմաններում:

Տեղամասից մոտ 6կմ հարավ գտնվում է Մարգահովիտի պետական արգելավայրը: Արգելավայրը կազմավորվել է ՀՍՍՀ Մինիստրների Խորհրդի 1971թ.-ի ապրիլի 4-ի թիվ 212 կարգադրությամբ, ունի 3368 հեկտար տարածք, գտնվում է Աղստև գետի ավազանում՝ Մարգահովիտ գյուղից դեպի Փամբակի լեռնաշղթայի հյուսիսային լանջերին ընկած տարածքում՝ ծովի մակարդակից 1900-2200 մ բարձրություններում: Կառավարող կազմակերպությունը՝ «Հայանտառ» ՊՈԱԿ: Ստեղծվել է խոնավասեր անտառների և դրանց բնորոշ կենդանական աշխարհի (այծյամ, գորշ արջ, կովկասյան մայրեհավ և այլն) պահպանության նպատակով:


Բնության հատուկ պահպանվող տարածքներ են հանդիսանում նաև բնության հուշարձանները: ՀՀ տարածքի բնության հուշարձանների ցանկը հաստատվել է ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N 967-Ն որոշմամբ: ՀՀ Լոռու մարզում հաշվառված բնության հուշարձանների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ստորև, աղյուսակ 15-ում:

Աղյուսակ 15.

Հ/Հ	Անվանումը	Տեղադիրքը
1	2	3
1	«Բազալտանման ապարների (Դիաբազների) գոլավոր դայք»	Ալավերդի քաղաքային համայնք, Լալվար գետի միջին հոսանք, կիրճի աջ ափին՝ Դարկ լեռնագագաթի հարավ-արևելյան ստորոտին, Ալավերդի «Լենհանքեր» ավտոճանապարհից մոտ 300 մ դեպի արևմուտք, Մադան գյուղի արևմտյան ծայրամասից մոտ 500 մ դեպի արևմուտք
2	«Գետնանձավ» անձավային թունել	Լոռի Բերդ գյուղից 2 կմ հվ-արլ, Ձորագետի ձախ ափին, հունից 40 մ բարձրության վրա
3	«Ձորագետի հրային ներժայթուկ»	Ձորագետ և Փամբակ գետերի հատման կետում, Ալավերդի-Վանաձոր ավտոմայրուղու աջ կողմում՝ մոտ 10 մ չհասած առաջին թունելի մուտք
4	«Տրավերտիններ դոլերիտային բազալտներում»	Մարց գյուղի խաչմերուկից մոտ 50 մ վերև, Մարց-Աթան գրունտային ավտոճանապարհի ձախ կողմում

1	2	3
5	«Թռչկան» ջրվեժ	Մեծ Պառնի գյուղական համայնք, Չիչխան գետի աջակողմյան Թռչկան վտակի վրա
6	«Դսեղի Ծովեր» լիճ	Դսեղ գյուղից 3 կմ արևելք-հարավ-արևելք, Սևորդաց լեռնաշղթայի Ծովիղաշ լեռնագագաթի հյուսիսային լանջի ափսեաձև զոգավորությունում
7	«Շամլուղի լճակ»	Շամլուղ գյուղական համայնք
8	«Օձի պորտ»	Արդվի գյուղական համայնքի արևելյան մասում, Հովնան Օձունեցու կաթողիկոսի մատուռից 120 մ հյուսիս-արևմուտք
9	«Քոշաքարի մրտավարդ»	Մարգահովիտ գյուղական համայնքի հյուսիսային սահմանագծից մոտ 1 կմ հեռավորության վրա, Գուգարքի անտառտնտեսության Եղեգնուտի անտառպետության բարձրադիր գոտում

Տեղամասին ամենամոտ գտնվող հուշարձանը «Քոշաքարի մրտավարդ»-ն է, որը գտնվում է տեղամասից մոտ 4900մ հեռավորության վրա (հուշարձանի պահպանության գոտին ներկայացված է ըստ 2014 թվականի օգոստոսի 5-ի):



Նկար 14.

3. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

• *Ենթակառուցվածքներ*

Մեծ Սարի գրամոդիորիտների հանքավայրի Հարավ-արևելյան տեղամասը գտնվում է ՀՀ Լոռու մարզում: Մարզի սոցիալ-տնտեսական բնութագիրը ներկայացվում է ստորև ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի 2019-2020թթ. պաշտոնական հրապարակումների:

Մարզի տարածքը կազմում է 3799կմ², մշտական բնակչությունը՝ 213.3հազ.մարդ, բնակչության խտությունը՝ 56մարդ/կմ², համայնքների քանակը՝ 56, բնակավայրերի քանակը՝ 130:

Մարզի քաղաքակյուն բնակչությունը կազմել է 126.1հազ.մարդ, գյուղականը՝ 87.2հազ.մարդ: Ըստ քաղաքների մշտական բնակչությունը բաշխված է հետևյալ համամասնությամբ. Վանաձոր 77234 մարդ, Ալավերդի 12543 մարդ, Ստեփանավան 12343 մարդ, Սպիտակ 12690 մարդ, Տաշիր 7203 մարդ, Ախթալա 1970 մարդ, Թումանյան 1484 մարդ, Շամլուղ 606 մարդ: Լոռու մարզի պայմանական 10000 բնակիչ ունեցող համայնքնի սոցիալական մի շարք բնութագրիչներ ներկայացված են ստորև, աղյուսակ 16-ում:

Աղյուսակ 16.

1	Ընդամենը	Նրանցից՝	
		կանայք	տղամարդիկ
2	3	4	
Բնակչությունը, մարդ	10000	5447	4553
Ծնվածներ, մարդ	120	59	61
Մահացածներ, մարդ	121	62	59
Ամուսնություններ	50		
Ամուսնալուծություններ	16		
Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր բնակմակերեսով, քառ.մ	42.1		
Կրթության ոլորտ, հաճախումը կրթօջախներ, մարդ			
նախադպրոցական	256	123	136
հանրակրթական	1426	689	737
երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	126	86	40

1	2	3	4
նախնական մասնագիտական (արհեստագործական)	25	5	20
միջին մասնակցիտական	90	48	42
բարձրագույն մասնագիտական	134	81	53
Առողջապահության ոլորտ			
առողջապահության ոլորտ՝ հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը)	43439		
մարզիկներ, մարդ	172	30	142
զբաղվածներ, մարդ	3616	1322	2294
նրանցից՝ ուսուցիչներ	132	118	14
բժիշկներ	25		
միջին բուժանձնակազմ	49		
գործազուրկներ, մարդ	859	193	666
Սոցիալական ապահովության ոլորտ			
ընդամենը կենսաթոշակատուներ, տարեվերջի դրությամբ, մարդ	2021	1263	758
աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ	603		
Հաճախումների քանակը տարվա ընթացքում			
գրադարան	17071		
թատրոն	1573		
համերգ	1000		
թանգարան	2520		
Հանցագործության դեպքերի քանակը	74		

Մարզի աշխատանքային ռեսուրսները գնահատված են 208.7 հազ.մարդ, որից քաղաքային բնակչություն՝ 126.7հազ.մարդ, գյուղականը՝ 82.0հազ.մարդ:

Աշխատուժի առաջարկը գնահատված է 100.3հազ.մարդ, որից քաղաքային բնակչություն՝ 62.6հազ.մարդ, գյուղականը՝ 37.7հազ.մարդ: Մարզում հաշվառված են 20.0հազար գործազուրկներ, որից քաղաքային բնակչություն՝ 13.6հազ.մարդ, գյուղականը՝ 6.4հազ.մարդ:

Գյուղատնտեսության ոլորտում զբաղված են 13.4հազ.մարդ, ոչ գյուղատնտեսականում՝ 67.0հազ.մարդ:

Արդյունաբերական արտադրանքի ծավալը կազմել է 87222.8 մլն. դրամ: Հանրապետության արդյունաբերական արտադրանքի կառուցվածքում Լոռու մարզը ապահովել է 4.2%, այդ թվում. հանքագործական արդյունաբերություն՝ 326526.6 մլն. դրամ, մշակող արդյունաբերություն՝ 41904.2 մլն. դրամ, էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում՝ 8412.5 մլն. դրամ, ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում՝ 1280.5 մլն. դրամ:

Արդյունաբերական արտադրանքի արտադրությունն ըստ տնտեսական գործունեության տեսակների բաշխվել է հետևյալ կերպ.

Աղյուսակ 17.

	Թողարկված արտադրանքի ծավալը, ընթացիկ գներով, մլն. դրամ	Պատրաստի արտադրանքի իրացումը, ընթացիկ գներով, 1 մլն. դրամ	Արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը, %
1	2	3	4
Ամբողջ արդյունաբերությունը	87222.8	87142.3	100.6
Այդ թվում՝			
Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	35625.6	34341.9	5.1 անգամ
մետաղական հանքաքարերի արդյունահանում	35455.9	35179.3	5.1 անգամ
հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման այլ ճյուղեր	169.7	132.6	112.0
Մշակող արդյունաբերություն	41904.2	42107.4	59.5
սննդամթերքի արտադրություն	32506.5	34647.5	95.5
խմիչքների արտադրություն	178.1	178.1	91.0
հագուստի արտադրություն	7260.1	7247.1	100.1

1	2	3	4
քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրություն	403.1	399.0	119.0
այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն	657.7	733.3	73.4
հիմնային մետաղների արտադրություն	209.3	209.3	0.8
մեքենաների և սարքավորանքի արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում	355.4	330.0	67.1
Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	8412.5	8412.5	93.7
Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում	1280.5	1280.5	102.5

Գյուղատնտեսության ոլորտում համախառն բուսաբուծական արտադրանքը կազմել է 21.6 մլն.դրամ, անասնաբուծականը՝ 46.9 մլն.դրամ:

Հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի ցանքաստարածությունը կազմել են 11540հա, միջին բերքատվությունը՝ 25.0g/հա, խամախառն բերքը՝ 26.2հազ.տ:

Կարտոֆիլի ցանքաստարածությունը կազմել են 3432հա, միջին բերքատվությունը՝ 158.9/հա, խամախառն բերքը՝ 49.4հազ.տ: Բանջարանոցային մշակաբույսերի համար վերը նշված ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 1303հա, 114.9g/հա և 15.0հազ.տ, բոստանային մշակաբույսերի համար՝ 9հա, 61.0g/հա և 0.1հազ.տ, պտղի և հատապտղի տարածությունների դեպքում՝ 2315հա, 25.8g/հա և 5.4հազ.տ:

Խաղողի տնկարկների տարածքությունները կազմել են 67հա, միջին բերքատվությունը՝ 15.6ց/հա, խամախառն բերքը՝ 0.1հազ.տ:

Խոշոր եղջրավոր կենդանիների գլխաքանակը կազմել է 72.8հազ.գլուխ, այդ թվում կովեր՝ 34.8 հազ.գլուխ, խոզեր 15.3հազ.գլուխ, ոչխարներ և այծեր՝ 27.0հազ.գլուխ, ձիեր՝ 2.5հազ.գլուխ:

Իրականացվել է 3.2մլն.դրամի շինարարություն և 3.4մլն.դրամի շինմոնիտաժային աշխատանքներ:

Փոխադրվել է 794.8հազ.տ բեռ, բեռնաշրջանառությունը կազմել է 12.0մլն.տ/կմ: Ինչպես նաև փոխադրվել է 5454.9հազ. ուղևոր, ուղևորաշրջանառությունը կազմել է 82.9մլն.ողևոր/կմ:

Ավտոմոբիլային տչանսպորտի ընդհանուր վազքն ըստ տևանսպորտի առանձին տեսակների կազմել է. բեռնատար ավտոմեքենաներ – 2277.6 հազ.կմ, ուղևորատար ավտոբուսներ – 5527.0 հազ.կմ, թեթև մարդատար ավտոմեքենաներ – 3133.5հազ.կմ, հատուկ ավտոմեքենաների վազք – 790.2 հազ.կմ:

Ավտոմոբիլային տրանսպորտի օգտագործված վառելիքն ըստ տեսակների բաշխվել է հետևյալ համամասնությամբ. բենզին – 280.9հազ.լ, դիզելային վառելանյութ – 1467.7հազ.լ, բնական սեղմված գազ – 1303.7 հազ.մ³:

▪ ***Հողերի տնտեսական յուրացման բնութագիր***

Հարավ-արևելյան տեղամասի տարածքը ներառված է Գուգարք համայնքի սահմաններում:

Համայնքի վարչական տարածքը 2092 հա, որից վարելահողեր 242 հա, խոտհարք 202 հա, արոտավայրերը 1078,6 հա, պտղատու այգիներ տնամեծներում 56 հա, այլ հողատեսքեր 164,3 հա: Սեփականաշնորհված է 370 հա, համայնքային սեփականություն 1317 հա:

Համայնքում գործում է 2 դպրոց, թիվ 1՝ ավագ և թիվ 2՝ հիմնական դպրոցը: Ավագ դպրոցի վիճակը բավարար է, թիվ 2-ը հավաքովի կառուցված հետերկրաշարժային տարիներին, նոր կառուցված Կոտեջային թաղամասում խնդիրներ կան աշակերտների տեղափոխման հետ, ուսուցիչները տեղացիներ են, Վանաձորից 14-ը: Մշակույթի տունը տիպային շենքում է տեղավորված,

կիսաքանդ է, վերանորոգման առաջնահերթ կարիք ունի տանիքը՝ մոտ 1250մ² տարածքով: Գործող խմբակները սահմանափակ է, չի ջեռուցվում: Ձմռանը տաքացվում են առանձին սենյակներ: Դահլիճը 300 տեղանոց է, շենքը անմխիթար վիճակում է, մշակույթային միջոցառումներ չեն իրականացվում: Նույն շենքում են տեղակայված գրադարանը, որն ունի 18200 կտոր գրականությամբ: Գործում են մարզական խմբակներ, որտեղ մարզվում են 120 սաներ:

Բնակֆոնդը 165,5 հազար քառ. մետր է, որից առանձնատներինը 122,5 հազար քառ. մետր: Բազմաբնակարան շենքերը թվով 9-ն է, որից 1-ը չորրորդ կարգի վթարայնության, ենթակա ամրացման:

Նախկին արտադրական ձեռնարկություններ, հատկապես կարի ֆաբրիկան չի գործում, չի պահպանվել հիմնական միջոցները:

Բնակչության հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է, մասնավորապես անասնաբուծությունը: Հաշվառված է 995 գլուխ խոշոր եղջերավոր, 460 գլուխ մանր եղջերավոր, 300 խոզեր:

Վարելահողերը չեն մշակվում, հիմնականում հնձում են խոտհարքների խոտերը, մասնավոր կողմից հնամաշ տեխնիկայով: Տնամեձներում մշակվում է կատոֆիլ, բանջարեղեն, ինչպես նաև տնամերձ այգիները: Ոռոգվող հողեր չկան, եղած ջրագծերը չեն գործում:

Մեծ Սարի հանքավայրի Հարավ-արևելյան տեղամասի տարածքը ներկայացված է գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերով՝ արոտավայրերով:

Տեղամասում օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքների ծրագիրը ներկայացվել է համայնքի բնակիչներին, քննարկվել է ծրագրավորվող աշխատանքներում բնակիչների ներգրավման հարցը: Կից ներկայացվում է հանրային լսումների ձայնագրությունը և արձանագրությունը:

▪ ***Պատմության, մշակութային հուշարձաններ***

ՀՀ կառավարության 2004 թվականի հունվարի 29-ի թիվ 49 որոշմամբ հաստատվել է ՀՀ Լոռու մարզի պատմության և մշակույթի անշարժ

հուշարձանների ցանկը: Գուգարք համայնքի տարածքում նշված են պատմության և մշակույթի հետևյալ հուշարձաններ.

Աղյուսակ 18.

Անվանումը	Ժամանակը	Գտնվելու վայրը
ԲԵՐԴՇԵՆ «ԲԱԴԱԼԻ ԲԱԳԵՐ»	Ք. ա. 2-1 հազ.	գյուղի աե կողմում
ԳԵՐԵԶՄԱՆՈՑ, տապանաքար	18-20-րդ դդ.	գյուղի հս-ամ եզրին
ԳՅՈՒՂԱՏԵՂԻ «ՄԵԾ ԲԱԳԵՐ»	13-17-րդ դդ.	գյուղից 4 կմ հս-աե
Գերեզմանոց, խաչքարեր, տապանաքար	13-17-րդ դդ.	
ԽԱԶՔԱՐ	12-13-րդ դդ.	գյուղի հս-աե եզրին, գոմերի մոտ
ՀՈՒՇԱՐՁԱՆ՝ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՀՎԱԾՆԵՐԻՆ	1975 թ.	գյուղի հս-ամ կողմում, Վանձոր տանող ճանապարհից ձախ
ՄԱՏՈՒՌ ՍԲ. ՍԱՐԳԻՍ, խաչքար, մատաղարան	19-20-րդ դդ.	գյուղից 100 մ հս, բլրագագաթին

Հուշարձանները գտնվում են Հարավ-արևելյան տեղամասի տարածքից 3.1-ից 6.5կմ հետավորության վրա:

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ

ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Մեծ Սարի հանքավայրի Հարավ-արևլյան տեղամասում գրանոդիորիտների արդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում տեխնաձին ճնշումներ են դրսևորվելու շրջակա միջավայրի բնական բաղադրիչների, ինչպես նաև լանդշաֆտային ամբողջականության վրա:

Մթնոլորտային օդ.

Ավտոտրանսպորտը, արդյունահանման և տեղափոխման աշխատանքները, մոտեցնող ճանապարհների կարգաբերումը դառնալու են որոշ քանակությամբ վնասակար գազերի և փոշու արտանետման աղբյուր:

Աշխատանքների իրականացման ժամանակ ընկերությունը առաջնորդվելու է ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N160-Ն որոշմամբ, համաձայն որի տարածքում ածխածնի օքսիդի, ազոտի օքսիդի (երկօքսիդի հաշվարկով), մրի և ծծմբային անհիդրիդի սահմանային թույլատրելի խտությունները (ՄԹԿ) համապատասխանաբար պետք է կազմեն է 5մգ/մ³, 0.2մգ/մ³, 0.15մգ/մ³ և 0.5մգ/մ³: Նախնական հաշվարկներին համաձայն, հայցվող տեղամասում վնասակար գազերի (ազոտի օքսիդ, ածխածնի օքսիդ, մուր) առավելագույն կոնցենտրացիաները չեն գերազանցելու նորմատիվային փաստաթղթերով ամրագրված սահմանային թույլատրելի խտությունները: Այդ նպատակով ծրագրավորվում են մի շարք բնապահպանական կառավարման միջոցառումներ, որոնց նկարագիրը ներկայացված է ստորև, 5-րդ գլխում:

Ջրային ավազան. Ջրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենա, քանի որ գետեր, գետակներ տեղամասի տարածքում չկան: Տեղամասից մոտ 200մ հեռավորության վրա սկիզբ է առնում Փամբակ գետի աջակողմյան անանուն վտակը, իսկ ստորգետնյա ջրերի հորիզոնների երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում չեն հայտնաբերվել: Արդյունահանման աշխատանքների ընթացքում քիմիական նյութերի, ագրեսիվ խառնուրդների օգտագործում չի նախատեսվում: Վտակի ջրերի աղտոտումը կարող է կապված լինել աշխատանքները մեքենաների տեղաշարժի հետ: Գետակի ջրերի աղտոտման կանխարգելման ծրագրավորվում են մի շարք

բնապահպանական կառավարման միջոցառումներ, որոնց նկարագիրը ներկայացված է ստորև, 5-րդ գլխում:

Հողային ծածկույթ.

Տեղամասի տարածքում օգտակար հանածոն վրածածկված է մինչև 1.8մ հզորությամբ փուխր-բեկորային առաջացումների շերտով (միջինը 1.41մ), որից 0.3-0.4մ-ը ներկայացված է անտառային գորշ հողերով:

Լեռնակապիտալ նախապատրաստական և արդյունահանման աշխատանքների արդյունքում խախտվելու են բացահանքի, արտադրական հրապարակի և լցակույտի տարածքի հողերը: Արտադրական հրապարակում հնարավոր է հողերի աղտոտում նավթամթերքներով:

Բուսական և կենդանական աշխարհ.

Տեղամասի տարածքում աճող տարախոտային բուսականությունը բնորոշ է ՀՀ լեռնային մարգագետնա-տափաստանային գոտուն: Տարածքում չեն արձանագրվել ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գրքերում գրանցված տեսակներ, տարածքը անտառածածկ չէ: Լանդշաֆտային փոփոխությունների, հողերի խախտման արդյունքում դրսևորվելու են ազդեցություններ բուսական ծածկի վրա, ինչպես նաև տարածի կենդանական աշխարհի վրա: Բացահանքի, և արտադրական հրապարակի, ինչպես նաև լցակույտի զգալի մակերեսի տարածքում խոտածածկը վերանալու է:

Արդյունահանման աշխատանքներից առաջացող աղմուկը և թրթռումները դառնալու են անհանգստացնող գործոն և հանգեցնելու են կենդանիների միգրացիային տեղամասի տարածքից:

Բնության հատուկ պահպանվող տարածքներ.

Մարգահովիտի պետական արգելավայրը գտնվում է տեղամասից մոտ 6կմ հարավ, իսկ «Քոչաքարի մրտավարդ» բնության հուշարձանը՝ 4900մ հեռավորության վրա : Հետևաբար, բնության հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական ազդեցություններ չեն դրսևորվելու :

Աղտոտում թափոններով. Օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների ժամանակ առաջացող թափոնների բնութագիրը ներկայացվում է ստորև:

1. Մակաբացման ապարներ, ընդհանուր 353.5հազ.մ³ ծավալով, ներկայացված են փխրուն-բեկորային դեյուվիալ առաջացումներով և հողմահարված, խիստ ճեղքավորված գրանոդիորիտներով:

1. Փխրուն-բեկորային առաջացումների միջին հզորությունը 1.41մ է, որից 0.3-0.4մ-ը՝ անտառային գորշ հողերի բերրի շերտն է: Բերրի շերտը չի հանդիսանում ընդերքօգտագործման թափոն, այն բնական ռեսուրս է, նախքան շինարարական աշխատանքների իրականացումը հեռացվելու է, կուտակվելու է լցակայանում այլ մակաբացման ապարներից առանձին: Մոտ 1.0մ միջին հզորությամբ գրանոդիորիտների բեկորներ, կտորներ պարունակող այուվիալ-դեյուվիալ ապարները ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի հոկտեմբերի 26-ի N342-Ն և 2015 թվականի օգոստոսի 20-ի N244-Ն հրամանների համաձայն հաշվառվել են 34000120 01 99 5 ծածկագրով: Դրանք դասվել են վտանգավորության 5-րդ դասին, այսինքն՝ ոչ վտանգավոր ընդերքօգտագործման թափոններ են:

5.51մ միջին հզորությամբ փուշտա շերտի առաջացումները, ինչպես նաև բլոկների արդյունահանման արդյունքում առաջացած մնացորդները թափոն չեն, դրանք համապատասխանում են «Խիճ և կոպիճ խիտ լեռնային ապարներից շինարարական աշխատանքների համար» 8267-95 ՀՍ ՄՕՇ-ի պահաջներին և կարող է օգտագործվել որպես լցանյութ ծանր բետոնների արտադրության համար, ճանապարհաշինարարության մեջ և այլ տեսակի շինարարական աշխատանքներում: Փուշտա շերտի ջարդոտված գրանոդիորիտները և բլոկների արդյունահանման մնացորդները հավաքվելու են, առանձին կուտակվելու են հատուկ հատկացված վայրում՝ հետագա վերամշակման և իրացման նպատակով:

2. Բանեցված կապարե կուտակիչներ և խոտան: Ծածկագիրը՝ 921 10100 13 01 2: Կազմը՝ կապարե թիթեղներ 70-75%, պլաստմասե իրան՝ 10-13%, էլեկտրոլիտ – 15-20%: Թունավոր է, էկոթունավոր, հրդեհապայթյունավտանգ չէ: Այս տեսակի թափոնը ընկերության տարածքում չի կուտակվում կամ պահվում, քանի որ սարքավորումների, տրանսպորտային միջոցների սպասարկումը իրականացվելու է Վանաձոր քաղաքի մասնագիտացված կազմակերպություններում:

3. Իրենց սպառողական հատկությունները կորցրած դիզելային յուղերի մնացորդներ: Ծածկագիրը՝ 54100203 02 03 3: Կազմը՝ յուղ 95%, մեխանիկական խառնուկներ 1.8%, ջուր 3.2%: Թունավոր է, էկոթունավոր, դյուրավառ, կոռոզիոն ակտիվության տեսակետից ոչ ակտիվ, ռեակցիոնունակ չէ: Հանքավայրի տարածքում այս թափոնի պահում չի նախատեսվում, քանի որ ընկերության ավտոպարկի և տեխնիկական միջոցների սպասարկումը կատարվելու է Վանաձորի մասնագիտացված կազմակերպություններում:

4. Բանեցված շարժիչների յուղեր: Ծածկագիրը՝ 54100201 02 03 3: Կազմը՝ յուղ 94.6%, մեխանիկական խառնուկներ 2.1%, ջուր 3.2%: Թունավոր է, էկոթունավոր, դյուրավառ, կոռոզիոն ակտիվության տեսակետից ոչ ակտիվ, ռեակցիոնունակ չէ: Հանքավայրի տարածքում այս թափոնի պահում չի նախատեսվում, քանի որ ընկերության ավտոպարկի և տեխնիկական միջոցների սպասարկումը կատարվելու է Վանաձորի մասնագիտացված կազմակերպություններում:

5. Բանեցված դողածածկեր: Ծածկագիրը՝ 57500200 13 00 4: Կազմը՝ բութադիենային կաուչուկ 97-99%, պողպատ՝ 1-3%: Էկոթունավոր է, պայթյունավտանգ չէ, բայց կրակի առկայությամբ կարող է այրվել: Ռոռոզիոն ակտիվության տեսակետից ակտիվ չէ, ռեակցիոնունակ չէ: Հանքավայրի տարածքում այս թափոնի պահում չի նախատեսվում, քանի որ ընկերության ավտոպարկի և տեխնիկական միջոցների սպասարկումը կատարվելու է Վանաձորի մասնագիտացված կազմակերպություններում:

6. Չտեսակավորված կենցաղային աղբ: Ծածկագիրը՝ 91200400 01 00 4: Կազմը՝ ապակի, փայտ, թուղթ, կտոր, սննդի մնացորդներ, պոլիմերներ: Հրդեհապայթյունավտանգ չէ, կոռոզիոն ակտիվության տեսակետից պասիվ է, ռեակցիոնունակ չէ: Թափոնը փոխադրվելու է Վանաձորի աղբավայր, աղբահանության նպատակով կնքվելու է համապատասխան պայմանագիր, վճարումը կատարվելու է ըստ պայմանագրի և «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան:

Թափոնների ծավալների գնահատումը կկատարվի աշխատանքային նախագծի, ՇՄԱԳ հաշվետվության և թափոնների կառավարման պլանի մշակման

փուլում, երբ հստակեցված կլինեն տեխնիկական միջոցների և անձնակազմի հաստիքային ցուցակի հետ կապված հարցերը:

Պատմամշակութային հուշարձաններ.

Գուգարք գյուղի պատմամշակութային հուշարձանները գտնվում են տեղամասի տարածքից 3.1-ից 6.5կմ հետավորության վրա: Հետևաբար որևիցե ազդեցություն հուշարձանների վրա չի դրսևորվելու:

Աղմուկ, թրթռումներ

Հանքավայրի տարածքում բլոկների արդյունահանման, տեղափոխման, ավտոտրանսպորտի տեղաշարժի արդյունքում առաջանալու է աղմուկ և առաջին կարգի տրանսպորտային թրթռում (վիբրացիա):

Թրթռումների սահմանային թույլատրելի մակարդակը Z առանցքով չպետք է գերազանցի 115դԲԱ, իսկ X-Y առանցքներով՝ 112դԲԱ:

Արդյունահանում իրականացնող ընկերության արտադրական տարածքում ձայնի մակարդակը և ձայնի համարժեք մակարդակը չի գերազանցելու 75 դԲԱ:

Ստորև բերվում է շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցության նախնական գնահատական մատրիցը.

Շրջակա միջավայրի բաղադրիչներ	Գործողություններ		
	Արդյունահանում	Տեղափոխում	Լցակույտառաջացում
Մթնոլորտային օդ	Ցածր երկարատև	Ցածր երկարատև	Ցածր երկարատև
Ջրեր	-	-	-
Հողեր	Միջին երկարատև	Միջին երկարատև	Միջին երկարատև
Կենսաբազմազանություն	Ցածր երկարատև	Ցածր երկարատև	Ցածր երկարատև
Պատմամշակութային հուշարձաններ	-	-	-
Բնության հատուկ պահպանվող տարածքներ	-	-	-
Ընդերքօգտագործման թափոններ	Ցածր երկարատև	Ցածր երկարատև	Ցածր երկարատև
Չայնային աղտոտում	Ցածր երկարատև	Ցածր երկարատև	Ցածր երկարատև

5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՌԻՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Համաձայն ՄՆ 245-71-ի՝ առանց պայթեցման աշխատանքների քարի արդյունահանման և վերամշակման ձեռնարկությունների համար սահմանված է 50մ սանիտարական-պահպանման գոտի: Մոտակա Փամբակ բնակավայրը գտնվում է հանքից 4.2կմ հեռավորության վրա, ինչը գերազանցում է սանիտարական գոտու սահմանված չափը 84 անգամ:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- Նավթամթերքների պահում արտադրական հրապարակում հատուկ այդ նպատակով հատկացված, բետոնապատ տարածքում :
- Կենցաղային աղբի հավաքում հատուկ ամուր պոլիէթիլենային տոպրակների մեջ, տեղադրում մեկուսացված հարթակի վրա, պարբերական կտրվածքով աղբահանության իրականացում դեպի Վանաձորի քաղաքային աղբավայր, ինչի նպատակով կնքվելու է համապատասխան պայմանագիր ծառայություն մատուցող ընկերության հետ,
- Ընկերության ավտոպարկի տեխնիկական սպասարկում Վանաձորի մասնագիտացված կազմակերպություններում, ինչը կբացառի հանքավայրի տարածքում բանեցված ավտոմոբիլային յուղերի, կապարե կուտակիչների, մաշված անվադողերի կուտակումը և պահումը:
- Արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում :
- Մեքենաների տեխնիկական հսկողության իրականացում և կարգաբերում՝ առաջացող աղմուկի վերահսկողության նպատակով :
- Ճանապարհների, արտադրական հրապարակի և լեռնային զանգվածի խոնավեցում՝ փոշու արտանետումների կրճատման նպատակով: Տեխնիկական և խմելու ջուրը գնվելու են պայմանագրային հիմունքներով մոտակա բնակավայրերից և ավտոցիստեռնով տեղափոխվելու է հանքավայրի տարածք :

- Կեղտաջրերի հավաքումը դաշտային հորատիպ գուգարանում, որը պարբերաբար դատարկվելու է հատուկ ծառայության ուժերով, աշխատանքների ավարտից հետո դատարկված փոսը լցվելու է քարերով:

- Խախտված տարածքների ռեկուլտիվացիա (լեռնատեխնիկական և կենսաբանական): Աշխատանքների ավարտից հետո կատարվելու է արտադրական հրապարակի, բացահանքի և լցակույտի տարածքի վերականգնում:

Այդ նպատակով օգտագործվելու է 1.41մ միջին հզորությամբ փուխր-բեկորային առաջացումների շերտը: Նախատեսված է 0.3-0.4մ հզորությամբ անտառային գորշ հողերի բերրի շերտի առանձին կուտակում ալյուվի-դելյուվիալ ապարներից: Հողի բերրի շերտը նախատեսվում է պահել 3մ բարձրությամբ թմբերի տեսքով, որոնց մակերեսին կկատարվի տարածքին բնորոշ մարգագետնա-տափաստանային տոտաբույսերի ցանք: Ընտրվելու են գերազանցապես լոբազգիների ներկայացուցիչները՝ հողերում հումուսի պաշարների արագ ձևավորում ապահովելու համար:

Ռեկուլտիվացման ենթակա մակերեսների և ծավալների վերաբերյալ տեղեկատվությունը կներկայացվի աշխատանքային նախագծի, ՇՄԱԳ հաշվետվության մշակման փուլում, երբ հստակեցված կլինեն ենթակառուցվածքների տեղադիրքերը և զբաղեցրած մակերեսները:

- - Ընդերքօգտագործման թափոնների կառավարում:

- «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի N 781-Ն որոշման դրույթների ապահովում՝ բուսական ծածկույթի ուսումնասիրություն, Կարմիր գրքում գրանցված տեսակների հայտնաբերման դեպքում՝ սահմանված ընթացակարգերի իրականացում:

1) վայրի բուսատեսակների և դրանց պոպուլյացիաների վիճակի ուսումնասիրության (տեսակային կազմ, տարածվածություն, քանակ) իրականացում, որի տվյալները սահմանված կարգով տրամադրվում են բուսական աշխարհի պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում լիազորված պետական մարմնին.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ արգելված թունաքիմիկատների օգտագործման կանխարգելում:

Հողերում Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գրքում (այսուհետ՝ կարմիր գիրք) գրանցված տվյալ բուսական տեսակի նոր պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում դրանց պահպանության նպատակով նախատեսվում է՝

1) առանձնացնել օգտագործման նպատակով տրամադրված տարածքում պահպանվող գոտիներ, որոնք ունեն տեղական նշանակություն և անհրաժեշտ են կարմիր գրքում գրանցված բուսատեսակների՝ սույն կետում նշված նոր պոպուլյացիաների կենսունակության ապահովման նպատակով.

2) ժամանակավորապես սահմանափակել առանձնացված պահպանվող գոտիներում տնտեսական գործունեության որոշ տեսակներ, եթե դրանք կարող են բերել նշված բուսատեսակների աճելավայրերի վիճակի վատթարացմանն ու պոպուլյացիաների կենսունակության խաթարմանը.

3) սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված միջոցառումների իրականացման անհնարինության դեպքում կարմիր գրքում, որպես տվյալ բույսի աճելավայր չգրանցված տարածքներից, բույսերի բնական վերարտադրության նպատակով տեղափոխում են տնտեսական գործունեության արդյունքում ոչնչացման սպառնալիքի տակ գտնվող բույսերի առանձնյակները տվյալ տեսակի համար նպաստավոր բնակլիմայական պայմաններ ունեցող որևէ բնության հատուկ պահպանվող տարածք կամ բուսաբանական այգիների տարածք, կամ կարմիր գրքում որպես տվյալ բույսի աճելավայրեր գրանցված որևէ տարածք, իսկ բույսերի սերմերը տրամադրում են համապատասխան մասնագիտացված կազմակերպությանը՝ գենետիկական բանկում պահելու և հետագայում տեսակի վերարտադրությունը կազմակերպելու նպատակով:

- Աշխատակիցների համար դասընթացների կազմակերպում, որի ընթացքում ներկայացվելու են տարածքին բնորոշ էնդեմիկ և ՀՀ կարմիր գրքերում գրանցված տեսակների վերաբերյալ մանրակրկիտ տեղեկատվությունը:

- Օգտագործվող տեխնիկական միջոցների շարժիչների կարգավորում՝ աղմուկի նվազեցման, շրջանի կենդանական աշխարհի վրա բացասական ազդեցության բացառման նպատակով:

- Աշխատանքների ժամանակ աղմուկի և թրթռումների վերահսկողություն :
Համաձայն գործող նորմատիվ փաստաթղթերի, արտադրական կազմակերպությունների մշտական աշխատատեղերով տարածքներում աղմուկի (ձայնի) առավելագույն մակարդակը չպետք է գերազանցի 95դԲԱ, իսկ արտադրական կազմակերպությունների մշտական աշխատատեղերում ձայնի մակարդակը չպետք է գերազանցի 80դԲԱ: Հանքահանման տեխնոլոգիական գործընթացների հետ կապված առաջանալու է առաջին կարգի տրանսպորտային թրթռում (վիբրացիա), որը կապված է տեղաշարժվող ինքնագնաց և կցորդային մեքենաների, տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: Թրթռումների սահմանային թույլատրելի մակարդակը Z առանցքով չպետք է գերազանցի 115դԲԱ, իսկ X-Y առանցքներով՝ 112դԲԱ:

- Ճանապարհներից դուրս տեխնիկայի տեղաշարժի բացառում :

- Արտակարգ իրավիճակների պատրաստ լինելու համար՝ շարժական կապի միջոցների առկայություն հետախուզական աշխատանքներ իրականացնող անձնակազմի մոտ, առաջին բուժօգնության միջոցների առկայություն, անվտանգության կանոնների վերաբերյալ անձնակազմի գիտելիքների ստուգում:

Տեղամասում արտակարգ իրավիճակները կարող են պայմանավորված լինեն հետևյալ գործոններով.

- i. երկրաշարժ՝ հաշվի առնելով, որ հանքավայրը գտնվում է սեյսմիկ ակտիվ գոտում,
- ii. հրդեհներ՝ կապված մարդածին գործոնների հետ:
- iii. անբարենսպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագացում, անհողմություն, անոմալ բարձր շոգ կա ցուրտ, թանձր մառախուխ, ամպրոպ) :

Նախատեսվում է մշակել ուժեղ երկրաշարժերի դեպքում գործողությունների պլան՝ վտանգավոր տարածքներից աշխատակիցների ապահով տարահանումն իրականացնելու նպատակով : Անվտանգության տեխնիկայի կանոնների վերաբերյալ հրահանգավորում իրականացնելու ժամանակ առանձին ներկայացվելու են նաև երկրաշարժերի ժամանակ աշխատակիցների պահվածքի կանոնները, գործողությունների հաջորդականությունը : Արտադրական հրապարակումն կենցաղային

նշանակության վագոն-տնակներում նախատեսվում են առաջին օգնության դեղորայքային փաթեթներ :

Հրդեհային անվտանգությունն ապահովելու համար աշխատակիցները տեղեկացվելու են տեխնոլոգիական պրոցեսներում օգտագործվող նյութերի հրդեհավտանգության վերաբերյալ: Նշանակվելու է հրդեհային անվտանգության համար պատասխանատու անձ, մշակվելու է հրդեհի դեպքում անձնակազմի գործողությունների պլան: Արտադրական տարածքի հատուկ հատկացված վայրերում տեղադրվելու են հրդեհաշիջման սկզբնական միջոցներ՝ կրակմարիչներ, ավագով արկղ, բահ:

Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների իհայտ գալու դեպքում կիրառվում են հետևյալ միջոցառումները (ըստ իրավիճակի).

- ավելացվում է հանքում կատարվելիք ջրցանը,
- կրճատվում է աշխատանքի տևողությունը,
- կրճատվում է միաժամանակ աշխատող մեքենաների և մեխանիզմների քանակությունը,
- նվազեցվում է փոշեգոյացման հետ կապված աշխատանքների ծավալները,
- եթե տեսանելիությունը 25 մ-ից պակաս է, էքսկավատորի տեղաշարժն ու աշխատանքն արգելվում է,
- բեռնատար մեքենաները կահավորվում են հատուկ մառախուղի լույսերով,
- ներհանքային և մոտեցնող ճանապարհներին կիրառվում են մերկասատույցի առաջացումը բացառող հատուկ հեղուկներ,
- աշխատակիցները պատսպարվում են արտադրական հրապարակում տեղադրված վագոն-տնակում:

Հանքում աշխատանքների անվտանգ իրականացման նպատակով.

- աշխատանքի են թույլատրվում անձիք, որոնք ունեն հատուկ պատրաստվածություն և որակավորում,
- օգտագործել մեքենաներ և մեխանիզմներ, սարքավորումներ և նյութեր, որոնք համապատասխանում են անվտանգության պահանջներին և սանիտարական նորմերին,

- անցկացնել պլանային-զգուշացնող համալիր վերանորոգումներ, պրոֆիլակտիկ աշխատանքներ և այլ դիտարկումներ,
- աշխատանքի ժամանակ պետք է պահպանվեն անվտանգության տեխնիկայի կանոնները:

Նախատեսվում է կատարել պլանային աշխատանքներ ուղղված արտադրական տրավմատիզմի նվազեցմանը, ժամանակին, ոչ ուշ քան երեք ամիսը մեկ, աշխատակիցների հետ անցկացնել հրահանգավորում անվտանգության տեխնիկայի գծով:

Արտադրական հրապարակում տեղադրվելու են երկու շարժական վագոն-տնակներ, աշխատակիցների հանգստի և սննդի ընդունման համար հարմարավետ պայմաններ ստեղծելու նպատակով: Ջրցուղարան չի նախատեսվում, քանի որ բոլոր աշխատակիցները հարակից բնակավայրերի բնակիչներն են և երեկոյան վերադառնում են իրենց բնակության վայրը: Մա նաև թույլ կտա նվազեցնել կենցաղային կեղտաջրերի արտահոսքը:

6. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ (ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ) ՊԼԱՆ

Օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների ընթացքում ընկերությունը իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.


1. մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ (Մթն.նմ.-1) ;
2. լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ, տարին մեկ անգամ հաճախականությամբ ;
3. օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով արտադրական հրապարակի տարածքի և ճանապարհի հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ (Հ.նմ.-1);
4. կուտակված բերրի հողերի ջրաֆիզիկական հատկությունների մոնիթորինգ, տարեկան մեկ անգամ (Հ.նմ.-2);
4. կենսաբազմազանության ուսումնասիրություն, նկարագրում՝ տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն (հստակ դիտարկան կետ նշել հնարավոր չէ, դիտարկումը կատարվելու է տեղամասում և հարակից տարածքներում) (Կ.Մ),
5. տեղամասից մոտ 200մ ռելիեֆով ներքև հոսող գետակի ջրերի մոնիթորինգ, յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ (Ջր.նմ.-1):

Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման և աղտոտվածության ուսումնասիրության նպատակով վերցված նմուշների լաբորատոր հետազոտությունը նախատեսվում է իրականացնել հավատարմագրված, համապատասխան հավաստագրեր ունեցող լաբորատորիաներում: Ստացված

տեղեկատվությունը ներկայացվելու է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարություն՝ ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշման պահանջներին համաձայն:

Մշտադիտարկման նպատակով ընկերությունը տարեկան շահագործական ծախսերում մասնակահանելու է 670.0հազ.դրամ:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության աղտոտման կանխարգելման մոնիտորինգի կետերի տեղադիրքը ներկայացված է ստորև նկար 14-ում:



Նկար 14.

Գրականություն

1. ՀՀ Բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ -ի տվյալներ
2. Почвы Армянской ССР. Ред./ Р.А. Эдилян, Г.П. Петросян, Н.Н. Розов. Ереван: “Айастан”, 1976 г.
3. Հայաստանի բույսերի Կարմիր Գիրք.– 2010թ.
4. Հայաստանի կենդանիների Կարմիր Գիրք.– 2010թ
5. Флора Армении / под ред. А.Л.Тахтаджяна. – Ереван: изд-во АН Арм ССР
6. Животный мир Армянской ССР. Даль С.К ,1954
7. ՀՀ Լոռու մարզպետարանի պաշտոնական կայք
8. Գուգարք համայնքի հնգամյա զարգացման ծրագիր